With funding from Austrian Development Cooperation

ՅՈՒՅՈՒՄՆԵՐ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻՆ

ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ (ծածկագիր՝ FRUITENIA/6.1-DIS)

Առաջարկները ներկայացնելիս պետք է հաշվի առնել հետևյալ պայմանները.

1. Ֆինանսավորում

   1.1. «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի (ICARE) կողմից իրականացվող «Այգեպտղաբուծության ոլորտի զարգացման ծրագիր Հայաստանում» (ՖՐՈՒՏԵՆԻԱ) ծրագիրը ֆինանսավորվում է Ավստրիական Զարգացման Համագործակցության (ԱԶՀ) կողմից։

2. Պահանջվող համակարգի բնութագիրը ներկայացված է Աղյուսակ 1-ում.

Աղյուսակ 1

Անվանում	Քանակ	Նկարագիր
Կաթիլային ոռոգման համակարգ	1	• Ինտենսիվ պտղատու այգի • Տարածքի չափսերը (մ)՝ 123 x 130 • Բույսերի տնկման սխեմա (մ)՝ տե՛ս կցված նախագիծը • Ավտոմատ կառավարման համակարգ • Ավտոմատ պարարտացման համակարգ • Կաթոցիկների թողունակություն՝ 4-6 լիտր/ժամ • Տեխնիկական մասի շինություն • Անձնակազմի ուսուցանում • Երաշխիքային սպասարկում՝ առնվազն 24 ամիս • Օգտագործվող բոլոր նյութերը, աքսեսուարները և սարքավորումները պետք է լինեն բաձրորակ

3. Տարածքի նկարագրությունը ներկայացված է Աղյուսակ 2-ում

Աղյուսակ 2

Համակարգի մոնտաժման հասցե	ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ոսկեհատ
Հողատարածքի կոորդինատները	40°07’40.5”N 44°19’53.5”E, 40°07’40.6”N 44°19’58.7”E, 40°07’45”N 44°19’58.6”E, 40°07’44.5”N 44°19’53.5”E
Ընդհանուր տարածք/այգու տարածք (հա)	≈1.95/≈1.60
Ծառատեսակները	Սալորենի, դեղձենի, կեռասենի, ծիրանենի
Ջրի հասանելիությունը (տե՛ս նկար 1)	- Տարածքում առկա է խորքային հոր (պոմպով) - Պոմպի հզորությունը՝ 30 կՎտ - Պոմպի արտադրողականությունը ≈ 140խմ/ժ, 40լ/վրկ - Տարածքից մոտ 600 մետր հեռավորության վրա առկա է գործող կաթիլային ոռոգման ջրավազան
Կատարված աշխատանքները	Հողանմուշի անալիզ, հողի բարելավման աշխատանքներ

4. Պահանջվող համակարգի մոնտաժման աշխատանքները պետք է իրականացնել հետևյալ հասցեում՝ ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ոսկեհատ, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի «Ոսկեհատ» ուսումնափորձնական տնտեսություն (կոորդինատներ՝ 40°07’40.5”N 44°19’53.5”E, 40°07’40.6”N 44°19’58.7”E, 40°07’45”N 44°19’58.6”E, 40°07’44.5”N 44°19’53.5”E):
5. Պետք է նշված լինի հստակ ժամկետ պահանջվող համակարգի մոնտաժման աշխատանքների իրականացման համար վերը նշված հասցեում:

6. Հայտի ներկայացման պայմաններ.

6.1. Հաշվի առնելով համավարակով պայմանավորված իրադրությունը՝ մրցութային հայտերն ընդունվում են բացառապես էլեկտրոնային եղանակով: Հայտի **կնքված և ստորագրված** օրինակի լուսապատճեն մինչև **2020թ. դեկտեմբերի 30-ը, ժամը 17:00,** խնդրում ենք ուղարկել հետևյալ էլ. փոստի հասցեին՝ sargis@icare.am:

Նկար 1. Տարածքի նկարագրություն

Այգու հիմնման համար ընտրված հողատարածքի պատկերը
(պատկերը՝Google map քարտեզից-40°07'41.6"N 44°19'54.4"E)

Անհրաժեշտության դեպքում կարող եք ցանկացած օր այցելել այգու համար ընտրված հողատարածք՝ նախապես համաձայնեցնելով այցի օրն ու ժամը: